ՆԱԽԱԳԻԾ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Պ-987[2]-17.12.2024-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 19.14-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Ինտերնետ շահումով խաղերի կազմակերպչի կողմից յուրաքանչյուր 100 միլիարդ դրամի չափով խաղադրույք ընդունելու իրավունք ձեռք բերելու համար՝	բազային տուրքի 175 000-ապատիկի և սույն հոդված 1.1-ին մասով սահմանված համապատասխան գործակցի արտադրյալի չափով
Տոտալիզատորի (ինտերնետ տոտալիզատորի) կազմակերպչի կողմից յուրաքանչյուր 50 միլիարդ դրամի չափով խաղադրույք ընդունելու իրավունք ձեռք բերելու համար՝	բազային տուրքի 50 000-ապատիկի չափով և սույն հոդված 1.1-ին մասով սահմանված համապատասխան գործակցի արտադրյալի չափով

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մաս.

«1.1 Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պետական տուրքի հաշվարկման համար հիմք են ընդունվում հետևյալ գործակիցները.

2025 թվականի ապրիլի 1-ից	2026 թվականի հունվարի 1-ից	2027 թվականի հունվարի 1-ից	2028 թվականի հունվարի 1-ից
2.0	3.0	4.0	5.0»

Սույն մասով սահմանված՝ պետական տուրքի հաշվարկման գործակիցները տվյալ տարվա պետական տուրքի չափի հաշվարկմանը մասնակցում են, եթե տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ «Խաղային գործունեության կարգավորման մասին» ՀՀ օրենքով սահ-

մանված կարգով խաղային գործունեության կարգավորման օպերատոր սահմանված չէ: Տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ «Խաղային գործունեության կարգավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով խաղային գործունեության կարգավորման օպերատոր սահմանված լինելու դեպքում պետական տուրքի հաշվարկման գործակից է համարվում «Խաղային գործունեության կարգավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով խաղային գործունեության կարգավորման օպերատոր սահմանվելու օրն ընդգրկող տարվա համար սույն մասով սահմանված գործակիցը:

Հոդված 2.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի ապրիլի 1-ից:

2. Սույն օրենքը տարածվում է օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ինտերնետ շահումով խաղերի կամ տոտալիզատորի (ինտերնետ տոտալիզատորի) կազմակերպչի կողմից խաղադրույք ընդունելու իրավունք ձեռք բերելու նկատմամբ:

3. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ձեռք բերված և մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը մասամբ օգտագործված՝ խաղադրույք ընդունելու յուրաքանչյուր գործունեության մասով միայն մեկ իրավունքի չօգտագործված մասի (ինտերնետ շահումով խաղերի դեպքում 100 միլիարդ դրամի, իսկ տոտալիզատորի (ինտերնետ տոտալիզատորի) դեպքում 50 միլիարդ դրամի և մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը օգտագործված մասի տարբերության) չափով խաղադրույքներ կարող են ընդունվել նաև սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո:

4. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ձեռք բերված և մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը դեռևս չօգտագործված՝ խաղադրույք ընդունելու իրավունքի հիման վրա սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո խաղադրույքներ կարող են ընդունվել սույն օրենքով սահմանվող և մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող պետական տուրքի դրույքաչափերի և գործակիցների հիման վրա հաշվարկվող պետական տուրքի տարբերությունը լրավճարելուց հետո:

5. Մինչև յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ը ձեռք բերված և մինչև այդ օրը մասամբ օգտագործված՝ խաղադրույք ընդունելու յուրաքանչյուր գործունեության մասով միայն մեկ իրավունքի չօգտագործված մասի (ինտերնետ շահումով խաղերի դեպքում 100 միլիարդ դրամի, իսկ տոտալիզատորի (ինտերնետ տոտալիզատորի) դեպքում 50 միլիարդ դրամի և մինչև այդ

տարվա հունվարի 1-ը օգտագործված մասի տարբերության) չափով խաղադրույքներ կարող են ընդունվել նաև այդ տարվա հունվարի 1-ից հետո:

6. Մինչև յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ը ձեռք բերված և մինչև այդ օրը չօգտագործ-ված՝ խաղադրույք ընդունելու իրավունքի հիման վրա այդ տարվա հունվարի 1-ից հետո խաղա-դրույքներ կարող են ընդունվել այդ տարվա հունվարի 1-ից սահմանվող և մինչև այդ գործող պետական տուրքի դրույքաչափերի և գործակիցների հիման վրա հաշվարկվող պետական տուրքի տարբերությունը լրավճարելուց հետո: